

ԲԱԶՄԱՎԵՊ

ՀԱՆԴԻՍ ՀԱՅԿԱԿԱՆ

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ ԸՆՏ ԱԼՓՐԵՏ ԿՈՒԴՇՄԻՏԻ ԳԵՐՄԱՆԱՑԻՈՑ :

(Բազմութեա, էջ 229):

Արդի Ագարանգեղոսի բնագիրն հայերէն է: — Ագաթանգեղոսի անուամբ ծանօթ՝ Տրդատ թագաւորին և սրբոյն Գրիգորի պատմութիւնն երկու օրինակ ունի, հայերէն և յունարէն: Յունարէնը Մեծափրաստէսի դիմացն էր իններորդ գարուն, որուն ոնց ուղածին պէս զարդարեց. իր գաղափարը շատ աւելի կատարեալ էր քան թէ վլորենտեանը², յորմէ յիսուսիանն Ստիլիսինկ առաւ և լրացոյ իր գործոյն ովմերորդ գլխոյն դատարկը: Յունարէնն 'ի նշապօջիս երկասիրուած լատին գործոյ մ'ալ գաղափար եղած կ'երևնայ³, որ իններորդ դարէն աստին չ'անցնիր: Այս նիւթոյս մէջ հմուտ գիտնոց կարծէն զհայերէնն իրաւամբ բնագիր կը համարի:

Այս բանն բացայացած կ'երևի արդէն յունական օրինակին ոճէն որ ամեն երեսին մէջ թարգմանութեան կնիքը կը

1 Գերմանացի ուսումնական արևելքան ընկերութեան ժամանակագրութենէն մասնաւոր ծաղկաբաղ եղած. հաս. լ. պ. էջ. 1-60: Agathangelos von Alfred Gutschmid. (Besonders abgedruckt aus der Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft Band XXXI, S. 1-60). Leipzig 1877.- Druck von G. Kreysing.

2 Laurent. plut. 7. Cod. 25.
3 Stilting. I. 1. pag. 306.

կրէ: Թարգմանուած է յունական դարձուածներով, լատին և յոյն ոճերով խոկած, ինչպէս Սալոն Սիմոնին վարոց պատմութենէն գիտենք, զոր թովհաննէս Մալալաս դրած է. և վեցերորդ գարուն նման մատենագիրներէն, բայց շատ անհարթ չէ ոճը: Խոկած և բազմաբան չարագրութիւնն յատուկ է թարգմանչին որ շատ անդամ իիստ զարդարուն և անսովոր կու գայ ականջիր. բայց յայսմալ օրինակագրին հաւատարիմ մնալու ամենայն կարեղի ճգոննք և յանիքը կը նշմարուին: Հայ յատուկ անունները շատ նման են եօթներորդ դարուն գրուածքի մը յատուկ անուանց գրութեանն, որուն խորագիրն է. Պատմութիւն 'ի սրբոյն Գրիգորէ մինչև 'ի մեր ժամանակն. Յադրազ որ զիետ նորա կացին յարռա նորա. միայն ե, ո և գրերը շատ տեղ արդի կ. Պօլսեցի Հայոց հնչման համեմատ թ, և և կ դարձընելով՝ յայսմալ Ագաթանգեղոսի հետոց նշան մը չունի, ուստի շատ հին բան ալ չէ: Թարգմանութիւնն գիտութեամբ աշխատասիրուած է: Այս բան իիստ որոշ կը տեսնուի Հայոց դից անունները Յունաց ծանօթ դից անուանց հետ փոխելուն մէջ, որով ընտիր ա-

ւանդութիւններուն կը գիմէ և այլուստ
մեղի ծանօթ տեղեկութեամբ ալ ա-
պացոյցներ կ'աւելցնէ : Միսալ ենթա-
դրովթեամբ խոսրով Հայոց թագաւորը
(Հայ. Ագաթ. Էջ 30) Արտաւան Փարթև
վերջին թագաւորին եղբայր կը կոչուի
(Գլ. 9). վասն զի թարգմանչին իր օ-
րինակն իրքն Վաղարշայ որդի ծա-
նօթ էր Արտաւան . ուրիշ աղքերէ
մ'ալ զլոսորով այլոց Վաղարշայ որդի
զիտէր, հոմանուն հարք շփոթմամբ մի
ծանուցան . սակայն Դիոնեսիոս կա-
սիոսէն գիտենք որ այլ և այլ անձինք
են : Ընթերցման սիալ է մինչև ՚ի
դրուեն կասպիական ասացեալ (Գլ.
10), որ ըստ Հայերէնին պիտի ըլլայ
մինչև ՚ի դրուեն Տիւրոնի (Էջ 30) : Ու-
րիշ տեղ կը ջանայ Հայ տուշութեան զի
մախոսել . փոխանակ տառուիրեք տա-
րուցն (Հայ. Ագաթ. Էջ 103. 105.
110), որ ըստ Հայոց Լուսաւորիշ մնաց
Վաղարշապատու վիրապին մէջ, ամեն
տեղ 14 տարի կը փոխանակուի (Գլ.
54. 56. 57) յայտնի համառակ 15
թուղն որ շատ եսքը (Հայ. Ագաթ.
Էջ 160) կը գրուի, զոր լոկ կարծիք
կամ բառի տարբերութիւն համարելու
է : Նոյնպէս 32 ընկերը են Հոփիսիմեայ
(Հայ. Ագաթ. Էջ. 575. 577) և միով
առաւելեալ 33 կ'ըլլան, որովհետև այս
թիւը առջի երեսներու մէջ հանդիպեք
էր . ուրեմն թուղն յաւելուածք իրա-
ւամբ չէր եղած : Նոյն անխոհական փո-
փոխութեամբ Գայիննեայ 2 ընկերը
(Հայ. Ագաթ. Էջ. 570. 577) կ'ըլլան
3 (Գլ. 121. 125) . յայտնի կերպով
սիալ կը համարնայ չորս ցիցերը որոց
վրայ վկայեցան սրբունիք :

Իրական և կամաւորապէս եղած ա-
զաւագութիւն ալ կայ (Գլ. 166) . վասն
զի եթէ հայ օրինակին հովովմայեցի
Սեղեստրոսն (Էջ 651-652) յոյն օրի-
նակին կոստանդնոսափասեցի Եւսեբիոսի
հետ նոյն չէ, անկէ յայտնի է որ յոյն
օրինակին ալ իրքն աթուանիստ քա-
ղաք Սեղեստրոսի Խտալից Հոռովիր կը
համարի և ոչ թէ նոր Հոռովիր : Յայտնի
կատարելութիւն մ'է յոյն օրինակին

կոստանդիանոսի իշխելու սկզբնակէտը
Սպանիա և Գաղղիա դնելը (Գլ. 163),
ուր հայն Սպանիա և Խոալիա¹ (Էջ
145-146) կը դնէ : Թարգմանիչն ուր
որ բան չի գիտեր և չի հասկնար՝ կը
թողու կ'անցնի (Գլ. 10. 14 Էջ 36.
39) . երկու անդամ Պահլաւ անունը
դուրս կը ճգէ . նոյն սկզբամբ (Գլ. 10)
յետագայ բառերը կը պակսին . « Ան-
տի սմա ձեռն առւեալ ՚ի կողմանց փու-
շանաց, և յայնմ մարզէ և յիւրեանց ՚ի
բուն աշխարհէն և ՚ի քաջ աղգաց և ՚ի
մարտիկ զօրացն » (Էջ 32) :

Յոյն օրինակին երկայն կամ կարծ
գաաարկներն յետագաներն են . (Գլ.
14. Հայ. Էջ 37) : Ռւտի աշխարհէն
անունը պակաս է (Գլ. 160. Հայ.
Էջ 37) . Արտաւազդ յատուկ անունը
չկայ (Գլ. 160. Հայ. Էջ 641) . Յովհան-
նէս Մկրտչին և Աթանազիհնեայ վկա-
յին անունները կը պակսին (Գլ. 142
Հայ. Էջ 607) : Երկայն թուարկու-
թեանց մէջ դատարկներն աւելի են .
(Գլ. 136. Հայ. Էջ 596-597) իմաս խառ-
նակ է ծոփաց աշխարհն, և Գարգա-
րացցոց աշխարհն իշխանն գուրս ձը-
գելու պատճառաւ (Գլ. 154 Հայ. Էջ
630) . վերջին մետասաներորդն՝ Ցի-
րիկէն, երկուտասաներորդն՝ Կիւրա-
կոս անունները ! կը պակսին : Բայց ու-
ղիղ խօսելով տեղ տեղ ալ յոյնը աւելի
կատարեալ է քան զիայ օրինակին .
(Գլ. 10. Հայ. Էջ 30) յոյնը միայն Ե-
րասխանոր գաւառին անունը կը պա-
հէ . (Գլ. 133. Հայ. Էջ 590) ուր որ հայ
օրինակն Արամազդ կ'ըսէ, յոյնը կ'ա-
ւելցունէ հեռնուի հօրն դից, որ է Զը-
րուան հայր Արամազդայ, ըստ ծանօթ
վարդապետութեան վերջին Պարսից :

¹ Բայց Գլ. 165 Էջ 650 օրինակաց տարե-
բութիւն չկայ . Delle parti d'Arabia ըստը ե-
տալացի թարգմանիչն սիալն է (Էջ 191) . Հայը
Ալբատասն հովանու ունի, որ Հիւշգ համապատաս-
խան է յոյնի առ տան հրօսաւու բրան .

Սասոնի ժամանակի պաշտօնական պնու-
անց մէջ Արտաւաստան այն աշխարհն էր կոյոււէր,
ուր որ նիմունէ էր (Խոր. աշխարհ. 88) . Թե-
րւելս նոյնը հաշման փոփոխմամբ իրադ ուստի եղաւ
վերը : (Խանօթ. Հեղ.) :

անսահման ժամանակի գերազոյն սկիզբն էր: (Գլ. 153. հայ. Եջ 628) Առըրպատականի համար որ կոչի Պռ. քովրիա ըստ պարսկական շեղուի յաւելուածը յատուկ է յոյն օրինակին՝ զոր Հակարտ ալ Պերորորիա կը կոչէ: Թարգմանիչը յառաջադրեր է բնադրին երկայնաբանութիւնը սպել. (Գլ. 85. հայ. Եջ 159) Թագաւորին խօսքին մէջ աշխարհաց անունները ծայրէ 'ի ծայր թարգմաներ, և (Գլ. 57. հայ. Եջ 106) թագաւորին հրովարտակն և այլն ըսելով կը համառօտուի. Վերջինը խիստ իրաւամբ, որովհետև անոր բովանդակութիւնը անմիջապէս ուրիշ հրովարտակի մը մէջ դարձեալ կը կըրկ նուր:

Ամենամեծ գատարկը կը գանուի (Գլ. 106. Եջ 193), յորմէ գուշակեց Ստիլտինկ իր բնատուր հանճարովն թէ թարգմանչին կամքով եղած մեծ գատարկ մը կայ, գուշակութիւն մը որ ստուգութիւն եղաւ հայ օրինակին ծանօթանալով. Սրբոյն Գրիգորի ամբողջ վարդապետութիւնը կը պակսի, որ է ամբողջովթեանը մեծ մասն:

Սակայն այս աննշան համսուոտու. թիւններով, 'ի բաց առեալ վերջինը, յայնին կը տեսնուի որ յունական թարգմանութիւնը՝ բոլոր պատմական և առասպելական դիպաց մէջ հաւատարմութիւն մը կը պահէ: Ցայսմբնագիրն և թարգմանութիւնն զլիմեանս կը լուսաւորեն փոխանակաւ:

Յոյն օրինակին միջանկեալ հնտուրածն ։ Միայն յունական օրինակն ունի յառաջարամնին և բուն պատմութեան միջանկեալ հատուածն որ Սասանեան Արտաշը պարսկական գահուն տիրանալուն պատմութիւնը կ'ընէ. սկիզբն է. Բ. Պարքեք՝ իրքեւ դէպքը 'ի բարի յաջողէին նոցա . . . և վերջն է. Թ. որ կորզեաց յանձն զարքայուրիւնն Պարսից: Մովսէս Խորենացւոյն քովը հետք մալ չկայ ասոր վրայ՝ ոչ համառօտ հատուածոց և ոչ բնդարձակ պատմութեան մէջ, որուն համար ըս-

տէպ ստէպ Ազաթանգեղոսի կը դիմէ. և Հազար Փարպեցւոյն խօսքերը թէ « Միկրն առաջին գրոց պատմութեան Հայոց. որում սկիզբն արարեալ պատմեաց սոուզից այրեն երանելի Ազարանգեղոս, 'ի մահուան Արուեանայ յԱրտաշըրէ յորդոց Սասանայ բանադր Սահմացւոյն », արդի Ազաթանգեղոսի սկզբնաւորութիւնն է, որով կ'իմացուի որ երկուքն ալ յունական օրինակին մէջ դրուած հատուածին վրայ տեղեկութիւն չունին :

Այս ալ կայ որ հատուածը Ազաթանգեղոսի պատմութեան ամբողջութենէն բաժանեալ անյարի ինքնուրոյն տարր կ'երկի. որովհետև հատուածին հեղինակն աւելի համամիտ է Արտաշըրի տիրապետութեան, ուր Ազաթանգեղոսն աւելի կը սիրէ և սիրելի կ'երկունէ անոր հայ ախսոյեանը:

Այս հատուածին յոյն օրինակին մէջ անցնելը խորհրդով եղած է, Յառաջանին վերջաբանէն բուն հատուածը անցնելը այս բառերով է. գրեալ, երէ որպէս Պարքեք և Հայք մարտեան ընդ միմեանս, սկիզբն արարից անտի, ուստի Պարքեք եցոյց զկիզբն կործանման. յայսնի յիշատակութիւն մը թուկիդիտէսի յառաջաբանէն քաղուած, որ խիստ օտար կ'երենայ այս բարբարոս պարագայի մէջ :

Հատուածին վերջաբանը Ազաթանգեղոսի պատմութեան հետ կը կապուի նոյն Ազաթանգեղոսին գողցուած երկուդէպքով, որոնք ըստ աեւլոյն նորէն կը կրկնուին. որ է թէ Արտաւանայ մահուած թօթը մէկէն կ'առնու խոսրով և թէ Պարքեքեք ալ լաւ համարեցան Արտաշըրի քան թէ իրենց ազգակցին

1 Գոնէ Խորենացւոյն ըսելը « Յաղագս սորա և համատումին կարձ' ի կարձոյ իմ անցանելով աջող քարտուղարն Տրդատոյ Ազաթանգեղոս, փոքր 'ի շատէ զմահն Արաեւանայ Պարմից թագաւորին, և զառանալ աէրութեանն Պարմեաց յԱրտաշըր որդուոյ Սասանայ, և զնուածել Պարմից ընդ ձեռամբ նորա », և այլն (Խոր. Բ. 46.) հակառակ կարծեաց աւելի կը նպաստէ. նոյնպէս և Պազար Պարպեցւոյն սկզբնաւորութիւնն:

ხქამისი მეტებული: Այս ფერში կը պատ-
მისტ (ყ. 10. հայ. էջ 30-31). բայց ա-
սով պատմისტებան մէջ հակասու მეტე-
მისტ է. վասն զի ետքը խոսրով կը
խաբու ի բազում վշտօք սրտի՝ Պար-
թևաց օգնու მეტე ան վրայ դրած յոյսը
պարապի երթալով. ուրեմն ՚ի յառա-
ջադռնէ չէր իմացած անոնց զգաց-
մունքը: Ապա ուրեմն հատուածը յոյն
թարգմանչին նորահնար դիւտն է, որ
կէսմը նիւթոյն նմանութեամբ ճար-
տարեց և կէս մայլ հնութեան կեր-
պարանք տուաւ Ագամթանգեղոսի սկիզ-
բըն եղած այն ծանօթու მეტեանը թէ
Հայոց թագաւորն ըստ կարդի երկրորդ
եղած ըլլայ յետ Պարսից թագաւորին: Արդէն Ստիլտինկ ըսեր էր թէ այս հա-
տուածին պարունակու მეტէնը, այսինքն
Արտաւանայ տեսած աղիտարեր երա-
զը և Արտաշրի իր տարիփածուին ձեռ-
քովը յաղթելը և Պարսից թագաւո-
րութեան տիրանալը, Պարսիկ պատմա-
գիրներն ալ կը պատմէն. միայն թէ զա-
զախինն ոչ թէ Արտադուխտ այլ կուլ-
նար կ'անուանեն¹: Այս խնդրոյս վրայ
աւելի տեղեակ Ֆիրտուսի է², որ Շահ-
նամէի մէջ խիստ մանրամասն տեղե-
կութեամբ կը պատմէ և անշուշտ անկէ
քաղած է՝ Քոնտէամիր³ (Chondamir),
մինչեւ Թապարի⁴ (Tabari) որ մեծա-
մասամբ արաբական նոր պարսիկ պատ-

մագիրներէն կը քաղէ⁵ Արտաշրի տի-
րապետութեան նկատմամբ խիստ զգու-
շմոր և կուեալ տեղեկու მեტիւններ կ'ա-
ւանդէ: Ֆիրտուսի գործն նոր է քան
զիսիտախնամէ (Chodâinâmeh), զոր
Տանիշվէր (Danishwer) խորովու Ա ա-
տենէն հաւաքեալ թագաւորաց զրքէն
Յազկերտի գ. 632-636 հրամանաւ գէհ-
էլի լեզուով զրեց⁶. և նոյնը արդէն
731ին արաբերէն թարգմանուած էր⁷.
Ետքերն ալ անոր վրայ շատ երկասի-
րութիւններ եղան:

Այն կարգէ գուրս մանրամասն տե-
ղեկութիւնը զոր Ֆիրտուսիէն աւելի
ունի յոյն օրինակին յաւելուած հա-
տուկտիրը արաբական աղբերէ մը ըլ-
լալուն կը վկայէ, որ ժամանակին նը-
կատմամբ ալ կարելի է: — Ոչ չորս
արեանառու արշակունի թագաւորաց
կարգին և ոչ Զիկաս Հոդաչ և կա-
րինաս Կարունչ անուանց հետքը կը
գտնուի Ֆիրտուսիի և ուրիշ յետին
մատենադրաց քովն, ինչպէս Արտաւա-
նայ և Արտաշրի երկու պատերազմաց
ալ նշան չկայ, որոնց պատմականու-
թիւնը արդէն ապացուցեր է Ստիլտինկ
Դիոնիսիոս կասիոսէն. Զիկաս անունը
Զիկ Հիշ գութեամբ Մենանդրոս կ'ա-
ւանդէ իրու գերագոյն էակ մը առ Պար-
սիկ, իսկ կարէն Խորենացիէն գիտենք
որ արշակունի երրորդ ցեղի մը նահա-
պետութեան տանուտելին էր, և երկուքը
մէկուեղ կը յիշէ բուզանդ⁸: կամ աղբե-
րէ մը հանուած է այս հատուածն կամ
թէ կենդանի աւանդութեն մը մնացորդ
է: Եցն թարգմանիշը ամեն գիտցածը
շաւանդեր. իսկ ինք զինքը կը մատնէ
յայսմ մասին երր թագաւորաց զասա-
ւորութենէն յանկարծ առ Արտաւան և
Արտաշրի կը ցատկէ այս բառերով.
« Անտի սկիզբն արարից ուստի զիշ-

1 Փիրտուսի (Ապուլ. Պատմ. Անսուր) պարսիկ
բանաստեղծն 940ին Խորասանու մատաւ մը
ծնաւ: Հմանաւով Պարսից թագաւորութեան
պատմութէր գրեց զայն և գրուածն Մահմուտ
Ղաղեւեանին ընծայեց: Գրուածն անմրցանակ
մալով բարկացաւ հեղինակն և 1010ին աղէկէ
մը կատակիւթէ վահմուա փախաւ Ղաղայէն:
Մահմուտ զջաց իր ըրպէտ ապերախոսութեանը
վրայ բայց ուշ՝ որոշենու Ֆիրտուսի մեռաւ
1020ին: Գործն Շահնամէ կը կոչուի որ է գրեւ Բա-
գաւորաց. 36 գարուց պատմութիւն կը պարունա-
կէ և ոտանաւոր է. թէ պարսիկ լեզուին յիշա-
տակարան մ'է, և թէ արևմտեան Ասից պատ-
մութեան աղբերը:

2 Bei Görres II, 404 und Mouradja D'Oh-
son II, 159.

3 Bei Herbelot, Bibl. orient. I. v. Arda-
shir Babegan.

4 Bei Vans Kennedy in den Bombay Tras-
saction III, 40 und Zotenbergs II. 1. ff.

1 Յանուանէ Խանէլ Աթիր 1. 273.

2 Vgl. Mohl zum Firdusi I. p. 16.

3 Masudi in den Nat. et extr. VIII, 165.

4 Fragm. hist. Graec. IV. 206. — Բառ-
դանդ. էջ. 150, 151, 169, 177, 187, 261 —
Դառնէ. 216, 217, 304, 305, 307, 310, 312,
380.

րոյ գլորմանն ճագ եցոյց Պարքենն » : Ամբողջութենէն կ'իմացուի թէ Արտաւանայ նախորդաց պատմութիւնը կը պակսի : Անմիջապէս առաջ նմանը կը հանդիպի ըստ յայտնի վկայութեան Ֆիրտուսիի Շահնամէի մէջ, ուսկից ինք քաղցեց : Բայց Ֆիրտուսիի պատմածներն ալ Արտաշըրի Արտաւանայ վրայ ըրած յաղթութեան և սպանման նկատմամբ՝ կրնայ ըլլալ որ յոյն մատենագիրն դիմացն ունէր : Եթէ փոխանակ կուլնար կոշելու զագախինն՝ Արտադուխտ կը կոչէ, այս փոփոխութիւնն խորհըրդով եղած է . Արտադուխտ է « Դուստր Արտաւանայ » : Եւ Ֆիրտուսիէն գիտենք Արտաւանայ գտներ պատմութիւնը, զոր Արտաշըր թագուհի ընտրեց պարսկական գահուն տիրելու ատեն : Եղյն միջանկեալ հատուկսորին և Ֆիրտուսիի պատմութեան դատարկին միակերպութիւնը կը հարկէ զմեզ ընդհանուր գրաւոր աղբիւր մը ընդունել : Հատակառիքն աղբիւրն փէհէլէ ի գրուած մ'է ։ և ժամանակին լեզուախօսական հաւաստեզք վերը հաստատուեցաւ հաւանաբար թէ Ագաթանզեղոսի յոյն թարգմանիլը 555-622ին գրած ըլլայ, ապա թէ ոչ միջանկեալ հատուածին մէջ երեցած փոյթն Սասանեանց պատմութեան նկատմամբ՝ Պարսից թագաւորութեան կործանելէն վերջ թունաց առնեն նշանակութիւն չէր ունենար : Կը խոստովանիմ թէ իմ գրած ժամանակն զժուարաւ կը համաձայնի այն երկու ժամանակաբական նշանաց հետ, զոր յոյն թարգմանիլը գիմացը առեր էր՝ իր ժամանակակէտն յարմարելու համար : Հայոց հոսքի ամիսն հովովէական տոմարի սեպտեմբերին՝ (Պլ. 88. Հայ. Էջ 163) և սահմի հոկտեմբերի (Պլ. 143.

Հայ. Էջ 644) հանդիպումն խորհրդով
եղած է. կամ թարգմանին այնպիսի
ատեն էր որ Հայոց տոմարքին ամեն մէկ
ամիսն կը համապատասխանէր ճիշդ ա-
մեն մէկ հոռվմէտական ամսոյն կամ ամ-
սոյն օրերուն մեծ մասին, կամ թէ
թարգմանին ալ Լակարտի պէս Յովլ
հաննէ Արքաւագին անշարժ թուա-
կանը կը գործածէ, որուն հոռի ամ-
սոյն առջի օրին սեպտեմբերի 10էն մին-
չև հոկտեմբ. 9ին կը հանդիպէր, իսկ սահ-
մի ամսոյն առջի օրը հոկտեմբերի 10էն
մինչև նոյեմբերի 8ին կը հանդիպէր:

Ազի դէպքն ոչ թէ 464-465ին է յուրում՝ հոռիկի և սեպտեմբերի, սահմիկի և հոկտեմբերի մէջ համեմատովիհան մը չկայ, այլ աւելի յարմար կու գայ 399-520 թուականին. իսկ վիրջին դէպքն դրիգոր Գ կաթողիկոսին ատենին 4 113-1166, որուն ժամանակակից էր Յովհաննէս Սարկաւագ: Եթէ երկրորդ ենթադրութիւնը ստոյգ առնոնք՝ յոյն թարգմանուութեն վերցրիշեալ հնաւանդքաղրւածոց ընդդէմ՝ անոր մատենացրողը շատ յետ կը ճգէ ժամանակաւ, իսկ առաջին ենթադրութիւնն ալ շատ աւելի կը հնացնէ՝ քան զօր կարելի է կարծել եթէ ինչպէս որ ըսի՞ խիւտափնամէի հետ կապ ունենայ: Ասոր համար չեմ կրնար ժամանակազրական դատաստանի մը զոհել խորպիլու ատենին առ մեղ հասած խիստ ծանօթպատմական տեղեկութեանց ծագումը, թէպէտ և ժամանակաւ յետնադոյն ըլլան. ինչ որ ալ ըսուի անորոշ և անստոյգ. է խիստ միջութեան պատճառաւ, որն որ Յօվհաննէս Սարկաւագայ ժամանակէն առաջ կը տիրէր ընդ մէջ հայ և ուղիւ ազգաց տօմարին որ և է այսպիսի դաշնակցեալ համաձայնութեն մը վրայ: Նման գժուարութիւն կ'ելլէ եւսերիսոսի քրոնիկոնին մէջ երկու տեղ. (Աւգեր Ա. էջ. 32. 49), ուր Ճասիս որ է յունիս՝ հայ մարերի ամսոյն կը հանդիպի, և այս 392 թուականին կ'ըլլայ. բայց քրոնիկոնին թարգմանութիւնը նոյն տարի գնելով հանդերձ գարձեալ բոլորովին անկարելի է, որովհետեւ ա-

1. Տանիշվիլի գործն չեմ համարիր առևան ըստ
որ անդք ներ անցանել, որովհետեւ ժամանակա-
դրույթեան նկատմամբ սախպուած ենք և չենք
ալ գիտեր թէ Խոսրով Ա. և Յազիկես Բրեքայից
պատաւիրանա. Եղան գրքն օրինակն որպես
ապարաւուած էր: Խոսրովն նաւագածուեն ա-
ւելի բան մը չի Տանիշվիլի առածն, որովհետեւ
երկուան ալ Մատենի (Տիրսոնի) գիւտեն կը պա-
հուեին: (Ման. Նեղինակին):

տով հնագոյն կ'ըլլայ քան զսուրբ դրոց
թարգմանութիւնը, մանաւանդ թէ և
քան զհայերէն զրոց դիւտն ։ կարծեմ
թէ սյապիսի հանդիպութիւն մը այն
տարիէն չի սկսիր գործածական ըլլալ,
երբ քան որ և է համաձայնութիւն հա-
մեմատարար աւելի համաձայն մը հան-
դիպեցաւ, և ոչ այն տարւոյն մէջ այս
հանդիպութիւնն սկսաւ. երբ ուրիշ հան-
դիպում մը եղաւ անոր հետ, այլ թէ
տարի մը սկզբնակէտ կ'առնուի յորում
հայ և հովմայեցի տարին նկատմամբ
ամսոց (ըստ որում անկարելի չէ այս
բանս ընդհանուր երկութին համար ալ
վերադրաց շրջանը տարբեր կերպով
գործածելուն պատճառաւ), ճիշդ հա-
մաձայնութեամբ իրարու կը հանդի-
պին. և այս համաձայնութեամբ տուանց
միտք գնելու չորս տարիներու բերած
մեծ տարբերութեանը՝ բաւական ան-
շարժ տարի մը կ'ըլլամ, ինչուան որ
տարի մը գայ յորում նոր համաձայ-
նութիւն մը սկսի, քան թէ ինչուան հի-
մայ գործածական հայ և հովմայեցի
տարիներու ամսոց նկատմամբ բացար-
ձակ մթութիւնը :

Հայ տոմարին կաղանդն առջի ան-
դամուն 344, սեպտեմ. 1ին, 468ին օ-
գոստոսի 1ին, 592 յուլիսի 1ին կը
հանդիպի: Բատ այսմ Եւսեբիոսի թարգ-
մանութեան համար սահմանեալ ժա-
մանակն 467 կ'ըլլայ, և Ագաթանգեղոսի
յոյն թարգմանութիւնն ալ 594ին կը
հանդիպի: Երկուքն ալ համաձայն են
ուրիշ ժամանակի թուականաց: Յոյն

Ագաթանգեղոսի գրութեան ժամա-
նակն 555-594 էն անդին չանցնիր: Այս
դրբին պատմածին դառնալով՝ Արտա-
դուխտ անունն երկրորդ բան մ'ալ կը
տրվինք. որչափ որ Սասանեանց մի-
ջոցն դուխտ բառով բարգեալ կանանց
անունները գուզնագիւտ են, նոյնչափ
ալ այս բարգութեան մէջ մանաւանդ
հօրը անուան առջի մասին մէջ Հայու-
յատուկ բան մի նշմարի. հաւանական
է թէ Հայ մ'ըլլայ հատուածին աւան-
դողն. եւ բասծն յայսմ հաստատեալ է
թէ Ագաթանգեղոսի յունարէն թարգ.՝
մանողն ոչ յոյն այլ Հայ էր ծննդեամբ,
և զայս ծնմարտանման կը համարիմ, ո-
րովհետև առաւելաւն հանդերձ զայս
կը քարոզեն թարգմանութեան առան-
ձին հանգամանք, Յունարէնի անյստա-
կութիւն, հայ զիւցաբանութեան հըմ-
տութիւն, Ագաթանգեղոսին դուրս ու-
րիշ հայ պատմական աղբերաց տեղեակ
ծանօթութիւնն: Եւ յիրաւի այս են-
թադրութիւնը անկարելի էր եթէ
թարգմանիցը, ինչպէս լանիկուա կը
կարծէ (Լ. 115), ըստ որում հայ անխո-
հական սխալն ըրած ըլլար' (Գլ. 10. հայ.
Էջ 30) զիւրոյ գերանունն յատուկ ա-
նուն կարծելով. և ասոր համար և որ
պահակն կոչէ ծուրարի Նօսքրու ուր-
ցու թարգմաներ. սակայն Ստիլտինկ
(Էջ 328) արդէն ուղիղն ըսեր էր. Ճայր
կամ ինչպէս յոյն գրութիւն մը ունի
ծուրը Տչօնք կասպիական դրանց մէկն
էր, և սխալողն հայ օրինակն է, մինչ-
դեռ յոյնը ուղիղ ձորայ կը գրէ:

Անյարմար չենք համարիր այս միջանկեալ հատուածին հայացի թարգմանութիւնն, որ
արդէն ծանօթ է (Պատմ. Հայ. Դար. Դ. Ագաթ. էջ. 104) վարը գնել, որպէս զի
դպտաբննելի կէտերն աչքի զիմացն ունենայ ընթերցողն:

Պարմէք երբեք գէպէ ՚ի բարի յաջողէին նո-
ցա, զթագաւորութիւն Պարսից, զՀայոց և ըշ-
շնդկաց՝ որ սահմանակիցք են արեւելայ Պար-
սից, նա և զիստալուծ զարդն Մասքեթաց՝ յին-
քեանն կորզէալ ժառանգէին, այսպիսի իման կար-
գաւ. Երկցագոյնն ՚ի Պարմէւաց տոհմէ, որ ա-
պա զարշակունի ընկալան անուն, հասակաւ
բարգաւած և արութեամբ շքեղ, գեր ՚ի մերոյ
քան զայլս երևեալ, նա կալաւ զիշխանութիւն
արքայութեան Պարսից: Ես որ Երկրորդն եր

զինի նորա, զՀայատատնեաց անոյր յինքն ըլ-
թացաւորութիւն. իսկ որ Երկրորդն էր՝ զՀմբդ-
կացն կալաւ զուրութիւն, զհպաւորն սահմա-
նաց Պարսից: Իսկ ըորըրոդն ՚ի նոցանէ՝ զՄաս-
քեացն ընկալաւ զիշխանութիւն թագաւորու-
թեան: Այս կարդ էր առհմին Պարմէւաց, և սո-
վիմբ զրացում ժամանակս յերկարեցան յաջո-
ղութեամբ:

Անտի սկիզբն արարից՝ ուստի զիւրոյ գլոր-
մանն ծագ էցայց Պարմէւն: Արտաւան որդի Վա-

զարչաց՝ ի Պատրիական ծննդոց, քաղաքի եկցն գործ գիտութեամբ ներհուն, և զոնթաց և ըլլ-հովովնեան աստեղացն համարեալ, և ի իրացն հանդերձելց կանխադէտ, իբրև յառակասափեր ընդ կնօվն, ամբառնայր զամն յաստեղս ի մեր և նորհրդոց լեռա հասուն, ասէ առ թագութեան. Տեսի քոնթացաստեղ, և այս ծուլի նման նշանակ, զի եթէ որ վարարանջեալ ի տէառնէ իւրմէ՛ ելցէ ընդդէմն նորա մարտի պատերազմա, յահօ-զեսցի նմա տաննել՝ ի վլուխ զայալթութիւնն և նկուն առնել զոտէ իւր: Զայս ասացեալ՝ ի քուն լինէր: Եւ որպէս զեարդ օրէնք են, մը ի համշտաց թագուհուցն ի նմին սենեկի առա-դաստին ունէր իւր դադար անկողնոյ առ ի պէտա կարեւոր հարկի սպասաւորութեան առ. ի նմանէն հրամանցեցն: Գուստոր էր սա ուրումն յաւագ ծառայոց, և ընտանի մերձաւոր ումենմն ի գլխաւոր իշխանաց, որց անոն Արքացիք՝ ի գաւառուն Սորուհստանեայց, յորց ի ցանկութիւն տարփանաց մընոնեալ ինք էր: Վասն որց ի լսել անի զրան թագաւորին, եւ ՚ի սենեկէ անափ զանիսուլ յարբայէն և ՚ի տիկնութէն, ըն-թացաւ առ Արքացիք որդի Սասանյ, յորմէ Սասանականըն՝ որ ՚ի նմանէ և ՚ի թագաւո-րացն Պարսից ընկալան զեագումն:

Մատեալ սոցա 'ի խորանն՝ քանզի և ոչ ոք 'ի սպասաւորաց կարեկ արգելութ զնա, գիտելով զառ միանուն միբերութիւնն, այսպէս խօսեր ընդհման. Այսինքան իմ Արտաշեալ ի բաց արք զբուժ յարտուանաց քոյց. և բուռն հարցեն ըլլ խորհրդոցն զոր խորհեցրած երբեմն. զրացիր և քաշ մեր, 'ի վերայ հասեալ գուշակութեան արքային. քանզի ժամ է արդ գեղեցիկ զինուութեան, արդ ընդ իմաստունն խորհրդակցութեան, արդ գեկ ժամանակ 'ի ճակատ գումար ըելց զրազմութիւն գնդիցն. վասն զի քննեաց թագաւորին զննեացս աստեղաց և ասէ. Այն ոք 'ի ծառայոց ընդգետ դարձրի տետան իւրաման, յաղթացէց. և արդ երես 'ի խորհուրդ ժողովիւտ, և կարթակցեցն առ իս զայ քո, և Հասանաց ցես երգման զրանս իմ. և եթէ յաջողէնցէ քեզ երեխ 'ի ձեռս զարպայութիւնն Պարսիգ, և զիս մի որոշեցէն յանկուղոց. վլ զոյն հանապազ ասէքը, յորմէ հետէ եղէ 'ի սրտի քում խորհուրդ այդ և ինձ պատմեցաւ. Զայսոսիկ Արտադուխտ :

իսկ Արտաշեր չնորհն կալաւ զնմանէ. և ա-
ջովն՝ ի վեր յերկինս բարձրացուցեալ զճեռս
կուղին, ասէ. Ահաւագիկ տեսյեն յանդիման
դիցն զօրութեաք, արև և հորը, ոգ և հոռ, զի
յայսմ և ի սոյն աւուր նորհուրդ արարեալ
ընդ աւագաց Պարսից, և նշանաւալ զարքայն,
վասվաղակի ի պատիւ տիկնութեան ամբարձից
զժե՞ց:

Եւ զայս լուեալ Արտադուխտայ ասէ. Արդ

ես Տեղաբժշկութեամ՝ ի խորան թագաւորին, զի պարտ է ինձ այսօր զանցելոց աւուրց տանել՝ ի գլուխ զավասարութիւն։ զի թէ և յաջողեաց մեղ Հնաբագէտ Հարտարութեամբ թերել՝ ի ձեռու զազատութիւն, բայց հարկ ի վերայ կայ սպաս տանել՝ ի պէտս արթունի։ Եւ զայս սասաց ետք երթայր՝ ի խորան արքայի, և գալու՝ ի մահկիւն ընկալմաներ։ Խոչ Արտաշէր յարուցեալ ժողովէաց զմեծամծօն ի պարագ և յԱրտեստանեայց, ընդ որու և զառաջինն՝ ի խորհուրդ մտեալ էր, եկաց ի մեջ նոցա և տաէ. Ո՛քանիւք Պարոիիկը և Աստրեստանեայց, զգոռուցմէին Պարթեաց ի վաղ ժամանակաց գիտեմք, և թէ զինարդ զայլցան վաստակս յափշտատիւնն՝ ճանաչեմք. պարուծին յանիրաւել իւրեանց, ոչ գադարեն տարապարտ սպաննելը՝ գարշն՝ ի Պարսից և յԱստրեստանեայց Պարթեաց եկամուռը՝ ի երան աշխարհ յերկրէ բարբարացաց։ Եւ արդ զինչ ունեն ասել, եթէ արդարք սուտ էցին բանք իմ, կացցէ մասցէն նա որ թագաւորէն անիրաււթեամք. ապա եթէ խօսեաց Ճշմարտութեամք, զինու զարգու վառեացուք. զի լաւ է մեղ մեռանել, քան եթէ ծառայէլ թագաւորի անիրաւէք։ Զայտոսիկ Արտաշէր:

ինկ իշխանքն Պարսից զսացեալմն ինդամիտ
ընդունէնք, քանից ցանկային թօժմաթիվ զուռ
տէրութեան Պարծեաց, և յիւրեաց ՚ի ընիկ
ազգատօնմէն Պարսից ունել զոր թագաւոր +
որոյ կամ ամեն առ Արտաշեր՝ ՚ուր միմր առաջ
նորդ ասպաւուածոց և արդեանց գործոց ընարեալ
առ ՚ի մէջ. որոց զիմաստուն խորհրդոց քոց ա-
թեալ և զիրոր, և գիտեմք զիրամանապարաւ,
թէին քոց առափին ուղղութեամբ ՚ի վեր երե-
ւեալ, և արդ զոր կամսդ արա. և առաջնորդ ըզ-
քեց ընծայեցո, աւագիկ մեց պատրաստ եմք
հետեւել զինի բանից քոց, անելու որ ինչ միան-
գամ յօդուա երկաբանիւր կողմանց իցէ: Ապա
՚ի ծագել առաւօտուուն ՚ի մարտ պատրաստեալ
Պարսից, հանդերձ Արտաշերաւ. առաջնորդաւ
իւրեանց, գեւսպանն արձակեցին նախ առ արքայ
Արտաւան զջիկ և զկարէն, զտանուտեարս
զինաւոր նահաւատեութեանց և զջարավար զ-
րաց: Եթեալ սոցա համարան եղէն մծին յանձն
քայի, և այսպէս խօսել պկան ընդ նմաւ և ամեն-
քայի: Հայութեալ զինաւատ կամ ամեն յաշ-
խարհէն Պարսից: եթէ հակարտեսեցին միոց
քոց ՚ի լուր պատգամանց Պարսից, խօսեցուք
և մեր զրան հրեշտակութեան մերոյ աներկիւղ
և անվանագ. քանզի և այս հրամանէք օրինաց են
կարգեալ յառաջնոց աերանց, որ ազատ կա-
ցուցին զջաւպանն յամենայ վասու. և արդ
եթէ տայցն հրաման, արքայ, խօսեցուք:

Եւ թագաւորն Արտաւան հրամայեաց նոյն
առել զոր կամիին :

Յայնժամ խօսել պատճ և առեն. Փոյթ պըն-
դութեան է արքայ առ մեզ Պարսիկս ծառայից
հաստատի կալ արքայի ի բրու գողովնորուն ամե-
նայնի տէր. և թագաւորին՝ հաւասարութեամբ
և արդարութեամբ լինել իրացն ինամատար, և
հեռի ի իմժժամայ բարուց կառավարել, ահ.
արկու առ թշնամին երեւել և մարդասէր առ-
հպատակս: Քանզի զիարդ իցէ նմա զանիրաւս
պատուհասել, եթէ ինքն ինքեամբ յանիրաւու-
թիւնս հատեալ իցէ. ո՞րպէս զեկոնդործս
ընդ տանձնագ արկանել, եթէ ինքն ի չարիս
փառակարս իցէ յօժարեալ: Արդ մեր ի վէրայ
հատեալ ծանր ծանր զնասաց քշոցդ յանցա-
նաց, ի բաց որոշեցաք զմեզ ի գումմէ ի ինաս-
նութենէդ. ոչ ի հպատակութենէ տաղակա-
ցեալք, այլ յապիրաա թագաւորէն խուսա-
փեալք. ոչ զընաւորութենէ բուռն հարեալք,
այն անագործ մտաց բուռաւորի տանել չկարա-
ցեալք:

Զայս խօսեցան Պարսիկք ընդ արքային:

Իսկ թագաւորն Արտաւան զաւս ի խօսարհ
ունելով զնեծ ժամն զյատակս տանն նշմարէր,
իրագէտ, կանխագէտ կործանման թագաւորու-
թեան իւրոյ: Հայեցեալ ապա առ պարզամա-
սորն ասէ. Ես ինքն եմ պատճառք չարեացս,
զի զոմանս ի ձէնջ իշխանութեամբ և աւագու-
թեամբ մեծարեցի, զայս ընչեւք մինխացոցի, և
զողով արքունի պարզեաց պարակաց և կա-
լուածոց տեսան կացուիք: Համա, գուր փու-
թամիլք ի կատարումն խորհրդոց ձերոց, և զիս
ինքն տեսանիլիք ի ձերդ խորհուրդ պատշա-
ճէալ, տաց ձեզ գիտել զլնել ընդիմակաց թա-
գաւորի: իսկ գուր որ առաքեալքտ էք ի բաց
զնացէք. և մի ևս յաւելուցուք այսպիսեաց բա-
նից լինել սպասաւորք, գուրց արդեօք ի ձէնջ
սկսայց զիրէժ չարեաց իին անիրաւելոց:

Զայսոսիկ իրու լուսն Զիկն և կարէն ըոդան
յատեան խորհրդոց Պարսիզ, և պատմեցին զա-

մենայն Արտաշրի և աւագանեացն Պարսիզ: և
յաւելին ի կարքի բանիցն զյանգուուն սրբա-
մութիւն յիմարութեան թագաւորին, որ ոչ
ևս այնուհետև սպասեալ մնայր պատգամոց,
այլ զնորհուրդ իւր զինեալ էր ընդդէմ իշխա-
նացն: իսկ Արտաշրի յշեալ առ Արտագուխան՝ ի
բաց կորզեաց զնա, և արգել փակեաց զնա աղ-
խիւքն հանդերձ յամուր դղեկի: և ինքն միաբա-
նութեամբ ընդ Պարսից և ընդ Ասորեսանեացյ
վառեալ կազմէր ընդդէմ Արտաւանայ արքայի
մեծի: Եւ ի վերայ հասեալ Արտաւանայ իրացն,
եթէ պարասասին ի մարտ ընդդէմ իւր, պատ-
րասէր և ինքն միաբանութեամբ Պարմեաց,
ունելով և ի Պարսից ոչ սակաւս համակամ և
համանս: Եւ յառաջնում յարձակման անդ՝ յո-
րում հարան ընդ միմեանս, բազումք յերկանքան-
չիւր կողմանց թաւալզընը անկանէին ի Պարսից
և ի Պարմեաց. այլ զօրանայր կողմն Արտաշրի՝
ի լըանին թողուլ և ալլց և բազմաց Արտա-
ւան, և գու յենուլ յինքն յԱրտաշրի: Ապա ի-
բրե, յերկրորդուն նուագի անդ հարան ընդ
միմանս, բազումք անկանէին ի Պարմեաց, և
ինքն յԱրտաւան ամասպարէր ի փախտաստ բայց
ապա գարձաւ միւսանգամ ի տեղի մարտին:
Արդ իրու զամաս երկուասան հակառեալ կա-
յին ընդդէմ միմեանց, երբեմն ի մարտ մատու-
ցեալք և երբեմն գադարեալք, ապա միւսան-
գամ բուռն հարեալ զմարաէ, իրու այն ինչ առ
միմեանս մերձեցեալ կամբն յիմեարս խանել,
մայնեաց առ արքայի Արտաւան, և ասէ...

Թագաւորեաց ի վերայ մնացելոցն Պարմեաց
և Պարսից և Ասորեսանեացյ. զամենայն ինչ
բարեկարգութեամբ ուղղեալ, սիրող երեւալ
արքարութեան և հաւասարոդատ իշխանու-
թեան քանզի գուն գործէ արժանի երեկը
գովութեան, որ կորզեաց յանձն զարբայու-
թիւն Պարսից:

կը շարունակուի: